Մի՛ թող Տէր մեզ խսպառ,
Անխընամ և թշուառ,
Դու միւսանգամ պայծառ
Արա Հայութիւն,

Տէր մեզ ղլեթացիր կըրկին,
Տուր հոգի իմ աղգին
Միաբանական,

Որ քո փառքիդ համար,
Դարձեալ դէպի արդար
Գընանք ճանապարհ.
Քեզ պաշտել ազատ,

Մաքրիր Տէր Հայի
Եւ սիրտ և հոգի՝
Հոգւոյդ կրակով։

Որ ճշմարտութիւն զգան.
Եւ զուգութիւն
Կապէ ազգութիւն
Ամուր շաղկապով։

Յ. Ոսկանեան։

Ի Գ.ՏԼՐ։

ԴԻՄԱՌՆԱԿԱՆ ԽՕՍՔ

Քոյր իմ քնքոյշ, ուր դու թռչիս,
Թեթեւաքայլ գնաս ուր՝
Անմսիթար զիս թողնելով.
Ասա, խնդրեմ, փախչիս ուր։
Ցնորք արդեօք, Նատալիա,
Եթէ երազ կ'տեսնեմ,
Որ քեզ մահուան դագաղի ծոց,
Իբր զրաց կ'տեսնեմ։
Սիրուն աչերդ էր կափուցած,
Ակնարկ մի անգամ չես ուզեր,
Լեզուդ անխօս էր մնայ լուռ.
Բառ մի գոնեա չարձակեր։
Քո սառնացեալ կուրծքի վերայ
Ինչու թեւերդ ամփոփած՝
Ալ չես մեկներ դէպ 'ի քո քոյր
Գրկել՝ զբկուել սրտաբաց։
Ո՞ ցաւալի այս տեսարան.
Զարթիլ այլ ևս չունիս քոյր,
Արեամբ լեցուեց խեղճուկիս սիրտ,
Կ'թալկանամ տես իմ քոյր։
Կերթաս յինէն անուշ քուրիկ
Ի գերեզման, թէ յերկին,
Ո՞վ կ'տար ինձ քեզ հետ, քոյր իմ,
Կալ և մնալ անմեկին։
Արեգին լոյս թող ինձ համար
Այսուհետև մութ լինի.
Առանց քեզի, իմ հարազատ,
Աշխարհն թող ինձ սուգ լինի։
Խեղճ որդեկիդ դարձուր գոնէ
Քաղցրահայեաց քո աչերդ,
Որ առանց մոր պիտի մաշուիլ.
Եւ ինձ մաշել իրա հետ։
Կենակցութեան թէ և այս
Ընկալար լուծ քո վերայ.
Բայց ի՞նչ օգուտ, տրտում տխուր
Տեսար վիճակ անխնայ . . . . . .
Ո՜հ, որ ցաւս պատմեմ լեզուաւ,
Որ անհամար են անթիւ.
Ո՞ւր դու արդեօք թողուս քո քոյր,
Յաշխարհ, թէ 'ի կեանս լի ախտիւ։
Յաշխարհ, այո, ուր ինձ մնայ,
Բռնած որդւոյդ ձեռներից
Միայն շիրմիդ այց եկանել
Արցունք հոսել ցաւալից։
Ո՜հ, ցաւ խեղճիս, ցաւ ինձ, քոյրիկ.
Ո՛ւր կ'թողուս միայնակ,
Ինձ էլ քեզ հետ տար գերեզման,
Քեզ հետ ննջել հողոյն տակ։

*
* *

Երկինք կնքեց ինձ այս վճիռ,
Թողուլ՝ ձգել այս աշխարհ.
Մի՛ դու սգար, մատաղ իմ քոյր,
Մի՛ քեզ առներ անդադար։
Դագաղի մէջ թէ և այս
Դնիմ անշարժ անմռունչ,
Թէ և մահուան դալուկ սարսուռ
Կնքեաց արդել իմ մրմունջ։
Սակայն պիտի զարթնեմ, քոյր իմ,
Երբ երկնային հնչէ փող,
Իսկ այժմ 'ի մութ գերեզման
Պարտիմ դնիլ դառնալ հող։

Դրաստամատ քաղցրիկ որդեյս
Քոյր իմ պահէ, պահպանէ,
Կտան երկինք, որ նա քեզնից
Սուզդ այդ և վիշտ կվանէ։
Ես այժմ յերկին անդարձ գնացիւք,
Կամիմ գնալ, քոյր իմ քոյր։
Ապա օն և դու որդեկիս հետ՝
Տուր ինձ վերջին քո համբոյր։

Օրիորդ Մարիամ Տէր Գաբրիէլեան։

է 15 Օքտոմբերի 1870 -դ
Յանէքանդրապոլ։

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐ

Պարոն Մատթէոս Տէր Պօղոսեանց Նորքեցի մի հարիւր բուբլի նուիրեց 'ի նպաստ շինութեան Նորակառոյց Ն'եմբանի Մայր Եկեղեցոյս։

Հրապարակաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը յիշեալ Պարոնին։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅՍ

(Շարունակութիւն։)

Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ։

Ստեփան Տարտախանեան	1
Յովհաննէս Զախարեան	2
Գէորգ Պօղոսեան Խաթիրանեան	15
Եղբարք Աղաճալեանք	15
Խաչերես Աղաճալեանց	5
Յովակիմ Խլեղեան	10
Կարապետ Իւսկիւտամեանց	2
Սարգիս Շարբշիկեանց	2
Զաքար Օղուզեան	1
Երկու եղբարք Ռափայէլ և Սաղաթիէլ	6
Միքայէլ Ծառուկեան	2
Յովհաննէս Ճարտարեան	2
Միքայէլ Բօրեան	3
Նազարէթ Խօճա-պարոնեան	2
Այրի Հռիփսիմէ Պիլիկովեան	5
Յակոբ Աստուածատուրեան Շեռչօրեան	5
Յովակիմ Զախմախեան	3
Այրի Գոհարինէ Տէվէճիովեան	3
Ադամ Թէմիրեան	3
Սերոբէ Տեվէճեանց	3
Երեմիայ Տեաչքեան	2
Մկրտիչ Պուտքեան	2
Գասպար Մօռպաշեանց	1
Պօղոս Շիրինեանց	1
Գրիգոր Բաղդասարեան Սարբյեանց	1
Սիմէօն Աւետիքեան Սուպաշեան	1
Թորոս Ապէյիզեան	1
Պետրոս Հիւանդեան	1
Պաղդասար Պալեան	10
Եւայ Զէյթունեանց	10
Փ. Քարաքաշ	5
Մ. Բապասեանց	5
Ստեփան Թուլեան	3
Գասպար Յարութիւնեան	5
Յովհաննէս Մաղեան	5
Յովհաննէս Իվանեան	3
Վարդերես Զէյթունեանց	1
Խաչերես Տիեաչքեան	1
Կարապետ Միքայէլեան Թուսունեանց	3
Պարոն Դուզոսլեան	1
Յովհաննէս Մարկոսեան Փոլեանց	25
Գասպար Մարկոսեան	10
Գաբրիէլ Մելքոնեան	10
Լուկաս Կիւմիշլեանց	5
Մարիամ Գաբրիէլեան Պոպովեանց	5
Անյայտ ոմն	6
Սարգիս Գիստեան	5
Վարդերես Ախչեան	3
Պետրոս Քեչիճեանց	2
Աննայ Փանոսեան Խաչիկեանց	2

(Շարունակելի։)